ԿՈՂԲ

Պատմագրության մեջ կոչվել է Կողբաքար: Այս անունով՝ Կողբափոր, կոչվել է նաև գավառը: Կողբը եղել է գավառի վարչական կենտրոնը:

Գյուղի մեջ եղել է զույգ ավանդատնով IV դարի մի եկեղեցի,[104] որի միայն ավերակներն են մնացել: Մասնագետների վկայությամբ եկեղեցին զարդարված է եղել քանդակներով:[105]

Մի եկեղեցու ավերակ էլ՝ Ս. Աստվածածին անունով, գտնվում է գյուղի գերեզմանոցում:

Երրորդ հուշարձանը Ագեղցի կոչվող գյուղատեղում է, մոտ 2 կմ Կողբից հարավ: Այն եռանավ սրահ է, խիստ ավերակ վիճակում:

Շրջանի առավել նշանավոր հուշարձանը գտնվում է Կողբից 3 կմ հարավ-արևմուտք, անտառի մեջ, շուրջը տարածված են հին բնակավայրի ավերակներ: Դա եռանավ բազիլիկա է՝ շարված կոպտատաշ քարով: Համեմատաբար լավ է պահպանված արևելյան պատը, մնացածները՝ 3 մ բարձրությամբ: Թաղը լրիվ թափված է ներսում: Ամայացած գյուղն ու եկեղեցին կրում են Տվարագեղցի անունը: Կրկնարմատ բառս կազմված է *տավար* (անասուն) *և ագեղցի* (եղցի, եկեղեցի) բառերից, որը տարածված է Հյուսիսային Հայաստանում (Թումանյանի, Իջևանի, Տավուշի շրջաններ): Բառաբարդությունը հանգամանորեն քննարկված է բանասեր-վիմագրագետ Ս. Ավագյանի կողմից (ՎԱԲ, 159):

Հարավակողմից եկեղեցին ունի մեկ ավանդատուն: Արտաքուստ արևելյան խորանը ուղղանկյունաձև է: Ճարտարապետական հիշյալ տվյալներով այս եկեղեցին կարող է թվագրվել միայն IV դարով: Գ. Շախկյանն ընդգծում է, որ «Տվարագեղցի եկեղեցին Լոռվա տարածքի» առայժմ հայտնի վաղմիջնադարյան միակ եռանավ դահլիճն է:[106]

ՏՎԱՐԱԳԵՂՑԻ

1129. ՏՎԱՐԱԳԵՂՑԻ. եկեղեցու արևելյան պատուհանի կողքին, ագուցված քարի վրա, 3 տող.



ՍԱՄ[ՈՒ]ԵԼ ԳՐ-
ԵՑ. ՅԱՂՈԹՍ
ՅԻՇԵՔ:

Հրատ. Շախկյան, Լոռի, 161: Ավագյան, ՎՊ, 156:

Ծանոթ. Արձանագրության քարը գույնով և տաշվածքով տարբերվում է եկեղեցու պատերի քարերից: Նույնանման այլ քարեր ևս կան՝ պատված պատկերաքանդակներով և զարդաքանդակներով: Ուշադրություն են գրավում հավասարաթև խաչերը, որոնք, անտարակույս, վաղ միջնադարյան են, մանավանդ կլոր շրջանակի մեջ առնվածը արձանագրված քարի վրա:

---

[104] *Գ. Շախկյան,* Վաղ միջնադարյան երկու հուշարձան Կողբում, ՊԲՀ, 1979, 4, 264-267:
[105] *Հ. Եղիազարյան,* Կողբ գյուղի հնագույն տաճարի պեղումները, «Էջմիածին», 1963, 9., 50-57:
[106] *Գ. Շախկյան,* Լոռի, 161: